ԿԽԿ ՀԱՅԱՍՏԱՆ
WRC ARMENIA

2020Թ. ԱՐՑԱԽՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԵՎ ՀԵՏՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՆԱՆՑ ՀԻՄՆԱՐԱՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՎՐԱ

ուսումնասիրություն

2020թ. Արցախյան պատերազմի և հետպատերազմական շրջանի ազդեցությունը կանանց հիմնարար իրավունքների վրա

Ուսումնասիրություն

Երևան 2021

Սույն զեկույցը պատրաստվել է «Կանանց ռեսուրսային կենտրոն» ՀԿ կողմից՝ ներկայացնելու համար 2020թ. սեպտեմբեր-նոյեմբեր ամիսների ընթացքում Ադրբեջանի կողմից սանձազերծված պատերազմի ազդեցությունը Արցախում բնակվող և/կամ տեղահանված կանանց վրա: Զեկույցում ներկայացված է տվյալներ պատերազմական գործողությունների հետևանքով կյանքի իրավունքի, խոշտանգումներից զերծ լինելու իրավունքի խախտումների, կանանց սեռական և վերարտադրողական առողջության, կրթության և սոցիալական ապահովության իրավունքների վրա պատերազմի ազդեցության, ինչպես նաև պատերազմի հոգեբանական հետևանքների վերաբերյալ:

Զեկույցում իրավունքների խախտումներին անդրադարձ է կատարվել ինչպես բուն պատերազմական գործողությունների ազդեցության, այնպես էլ հետպատերազմյան ճգնաժամային ժամանակահատվածում պետության արձագանքի տեսանկյունից:

ԿՌԿ ՀԱՅԱՍՏԱՆ
WRC ARMENIA

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 6

ԻՐԱՎՈՒՆՔԻ ՌԵԺԻՄԸ ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ 8

ԿՅԱՆՔԻ ԻՐԱՎՈՒՆՔ ԵՎ ԽՈՇՏԱՆԳՈՒՄՆԵՐԻ ՁԵՆԹԱՐԿՎԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ 9

ՊԱՏԵՐԱԶՄԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՆԱՆՑ ԵՎ ԱՂՋԻԿՆԵՐԻ ՍԵՌԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՎՐԱ 11

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԵՎ ԴՐԱՆԻՑ ՀԵՏՈ 18

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ ԵՎ ՏԱՐԱԾՔՈՒՄ 23

ՏԵՂԱՀԱՆՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ 24

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ ԿԱՆԱՆՑ ՎՐԱ 26

ԱՄՓՈՓՈՒՄ 31

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Կանայք և պատերազմը

Կանանց դերը պատերազմների ընթացքում և պատերազմների ազդեցությունը կանանց վրա ուսումնասիրման առարկա են դարձել միայն վերջին տասնամյակներին: 2000թ. ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդն ընդունեց «Կանայք, խաղաղություն և անվտանգություն» խորագրով 1325 բանաձևը[1], որը ՄԱԿ-ի առաջին փաստաթուղթն է, որ ինստիտուցիոնալ առումով անդրադառնում է կանանց նկատմամբ զինված հակամարտությունների ազդեցությանը, զինված հակամարտությունների կանխարգելման, կարգավորման և խաղաղաշինության գործընթացին կանանց ներգրավմանը: Ի թիվս այլ խնդիրների՝ բանաձևը նաև կոչ է անում պետություններին կառուցողական գործողություններ իրականացնել կանանց և աղջիկներին գենդերային բռնությունից, մասնավորապես՝ բռնաբարությունից, սեռական բռնության այլ տեսակներից և պատերազմական իրավիճակներում տեղի ունեցող այլ բռնության տեսակներից պաշտպանելու համար, ինչպես նաև տեղահանված անձանց բնակության վայրերի ձևավորման, տեղահանման գործընթացի և վերաինտեգրման ծրագրերի մշակման ժամանակ հաշվի առնել կանանց և աղջիկների և նրանցից կախյալ անձանց առանձնահատուկ կարիքները:

Կանանց վրա պատերազմի ազդեցության վերաբերյալ լայնածավալ հետազոտություն իրականացվել է 2001թ. Կարմիր խաչի միջազգային կոմիտեի (այսուհետ՝ ԿԽՄԿ-ի) կողմից[2]: ԿԽՄԿ հետազոտության հիմնական եզրակացություններից էր այն, որ միջազգային հումանիտար իրավունքը, մարդու իրավունքները և փախստականների իրավունքը պաշտպանության մեխանիզմներ են տրամադրում պատերազմական իրավիճակներում կանանց կարիքներին համապատասխան, ուստի, կանայք այսօր պատերազմից տուժում են ոչ թե կարգավորումների բացակայության, այլ դրանց չկիրառման հետևանքով:

2020թ. Արցախյան պատերազմը

2020 թվականի սեպտեմբերի 27-ին՝ առավոտյան 7:10, Ադրբեջանը Արցախի ուղղությամբ սկսեց օդային

1. Տես՝ https://documents-dds-ny.un.org/doc/UNDOC/GEN/N00/720/18/PDF/N0072018.pdf?OpenElement
2. Տես՝ https://www.icrc.org/en/doc/assets/files/other/icrc_002_0798_women_facing_war.pdf

և հրթիռային հարձակում, որի հետևանքով Արցախում լայնամասշտաբ պատերազմ սկսվեց[3]: Նույն օրը Հայաստանում և Արցախում հայտարարվեց ռազմական դրություն և զորահավաք:Ադրբեջանի հարձակման առաջին օրից՝ 2020թ. սեպտեմբերի 27-ից մինչև հրադադարի հաստատումը՝ 2020թ. նոյեմբերի 10-ը, ադրբեջանական զինված ուժերը թիրախավորել են քաղաքացիական անձանց Արցախում և Հայաստանում: Արցախի գրեթե բոլոր քաղաքացիական բնակավայրերը, այդ թվում խիտ բնակեցված քաղաքները (Հադրութ, Ստեփանակերտ և այլն) շարունակական թիրախային հրետանային և օդային հարձակումների տակ են եղել պատերազմի բոլոր 44 օրերի ընթացքում: Ադրբեջանի կողմից թիրախավորվել են դպրոցներ, մանկապարտեզներ և հիվանդանոցներ:

Արցախի մարդու իրավունքների պաշտպանի զեկույցում արտացոլված տվյալներով՝ 2020թ. սեպտեմբերի27-ից մինչև 2021թ. հունվարի 27-ը ընկած ժամանակահատվածում հայտնաբերվել է Ադրբեջանի զինված ուժերի կողմից սպանված 72 քաղաքացիական անձի մարմին, որից՝ 60 տղամարդ և 12 կին[4]:

Ռազմական գործողությունները սանձազերծվել և շարունակվել են Ադրբեջանի կողմից COVID-19-ի ընթացքում պատերազմական գործողություններն անհապաղ դադարեցնելու ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի ուղիղ պահանջի կոպիտ խախտմամբ:[5] Ակնհայտ էր, որ COVID-19 համաշխարհային պանդեմիայի ժամանակ հարձակումն էականորեն նպաստելու էր հումանիտար աղետին: ՀՀ և Արցախի մարդու իրավունքների պաշտպանների փաստահավաք աշխատանքները վկայում են, որ Ադրբեջանի զինված ուժերը վիրուսի գլոբալ սահմանափակումներն օգտագործելով են Արցախի և Հայաստանի բնակչությանը պատճառել զանգվածային մահեր և այլ տառապանքներ[6]: COVID-19-ի պայմաններում ադրբեջանական զինված հարձակումների պատճառով մահաբեր վիրուսն ունեցավ սրընթաց աճ ոչ միայն Արցախում, այլ նաև Հայաստանում: Եթե պատերազմին նախորդած 7 ամսվա տվյալներով արձանագրվել է 951 մարդու մահ, ապա պատերազմի 44 օրերի ընթացքում այդ թիվը հասել է 658-ի, իսկ պատերազմից հետո միայն կես ամսվա ընթացքում մահացել է 584 մարդ: Ադրբեջանական զինված ուժերի գործողություններն, այսպիսով, պետք է որակել ոչ միայն պատերազմական, այլ նաև մարդկության դեմ ուղղված հանցագործություններ:

3. Տես՝ https://www.evnreport.com/spotlight-karabakh/azerbaijan-launches-wide-scale-offensive
4. Տես՝ https://www.artsakhombuds.am/hy/document/785#_Toc62764429
5. Տես՝ https://undocs.org/en/S/RES/2532(2020)
6. Տես՝ https://www.ombuds.am/images/files/e632fe2219cb340fc05194d684d7206f.pdf

ԻՐԱՎՈՒՆՔԻ ՌԵԺԻՄԸ ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ

Ռազմական գործողությունների ժամանակ գործող իրավունքի նորմերը, որոնք սահմանում են ռազմական գործողություններ վարելու միջոցներն ու մեթոդները, զինված ընդհարման ժամանակ կողմերի համար իրավաբանորեն պարտադիր որոշակի վարքագծի կանոններ ընդունված է ամբողջացնել Միջազգային մարդասիրական իրավունք (այսուհետ՝ ՄՄԻ) եզրույթով: ՄՄԻ-ի հիմնական աղբյուր են 1949 թ. օգոստոսի 12-ի Ժնևյան 4 կոնվենցիաները :

Միևնույն ժամանակ, Միջազգային արդարադատության դատարանը, որը ՄԱԿ-ի հիմնական դատական մարմինն է և իրավասություն ունի միջազգային մարդու իրավունքների հարցերի վերաբերյալ, իր 1996թ. խորհրդատվական կարծիքում նշել է, որ պատերազմի ժամանակ ՄԱԿ-ի Քաղաքական և քաղաքացիական իրավունքների մասին դաշնագրի գործողությունը չի դադարում: 2004թ. խորհրդատվական կարծիքում դատարանը նույնն ասել է նաև ՄԱԿ-ի Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին դաշնագրով ապահովված իրավունքների մասին՝ նշելով, որ տարածքը գրաված պետությունը պարտավոր է ապահովել Դաշնագրով ամրագրված նվազագույն իրավունքները նույնիսկ պատերազմի ժամանակ:

Այսպիսով, պատերազմական գործողությունների ժամանակ ևս պետությունները պետք է ապահովեն անհատի (հատկապես քաղաքացիական բնակչության) կյանքի, խոշտանգումների չենթարկվելու, առողջության պահպանման, կրթության, սոցիալական ապահովության և այլ հիմնարար իրավունքներ:

ԿՅԱՆՔԻ ԻՐԱՎՈՒՆՔ ԵՎ ԽՈՇՏԱՆԳՈՒՄՆԵՐԻ ՉԵՆԹԱՐԿՎԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ

ՄԱԿ-ի Քաղաքական և քաղաքացիական իրավունքների մասին դաշնագրի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կյանքի իրավունքը յուրաքանչյուր մարդու անկապտելի իրավունքն է, որը պաշտպանվում է օրենքով: Ոչ ոք չպետք է կամայական կերպով զրկվի կյանքից: Կյանքի իրավունքն ամրագրված է նաև Մարդու իրավունքների և ազատությունների եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ ՄԻԵԿ) 2-րդ հոդվածում, ինչպես նաև մարդու իրավունքների մի շարք այլ հիմնարար փաստաթղթերում:

Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային վերաբերմունքի չենթարկվելու իրավունքը մարդու հիմնարար իրավունքներից է, որն ամրագրված է ինչպես ՄԱԿ-ի քաղաքական և քաղաքացիական իրավունքների մասին դաշնագրի 7-րդ հոդվածում և ՄԻԵԿ-ի 3-րդ հոդվածում, այնպես էլ մարդու իրավունքների մի շարք այլ հիմնարար փաստաթղթերում: Խոշտանգումների չենթարկվելու իրավունքը բացարձակ իրավունք է, ինչը նշանակում է, որ այն չի կարող սահմանափակվել որևէ նպատակով, այդ թվում՝ նաև ռազմական գործողությունների ժամանակ:

Արցախի մարդու իրավունքների պաշտպանի զեկույցում արտացոլված տվյալներով՝ 2020թ. սեպտեմբերի 27-ից մինչև 2021թ. հունվարի 27-ը ընկած ժամանակահատվածում հայտնաբերվել է Ադրբեջանի զինված ուժերի կողմից սպանված 72 քաղաքացիական անձի մարմին, որից 60 տղամարդ և 12 կին[7]:

Արձանագրվել են խոշտանգման և դիակների խեղման, անխուսափելիորեն քաղաքացիական մահերի հանգեցնող թիրախային հարվածների մի շարք դեպքեր: Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրել է նաև 163 քաղաքացիական անձի վիրավորման դեպք, որոնց զգալի մասը տեղի է ունեցել այլ անձանց մահվան հանգեցրած հարվածների հետևանքով:

Արցախի ՄԻՊ-ի տվյալներով՝ 7 կին (ներառյալ 1 անչափահաս աղջիկ) սպանվել են ադրբեջանական զինված ուժերի հեռահար հարվածների հետևանքով, ներառյալ հրթիռակոծության, հրետակոծության, ռմբակոծության, դիվերսիոն խմբերի հրազենային կրակոցների, իսկ 5 կին՝ ադրբեջանական գերության կամ առնվազն վերահսկողության ներքո՝ ֆիզիկական բռնության, խոշտանգման և այլ անմիջական

7. Տես՝ https://www.artsakhombuds.am/hy/document/785#_Toc62764429

միջոցների կիրառմամբ:

Խոշտանգումների մասին են վկայում հայտնաբերված մարմինների ուսումնասիրումը: Այսպես, Հադրութի շրջանի Վարդաշատ գյուղում բնակվող 82-ամյա կնոջ դիակն իր համայնքում հայտնաբերվել է լրիվ քայքայված վիճակում՝ գլուխը մարմնից անջատված է եղել, իսկ ձեռքը՝ կոտրված: Կնոջ ամուսնու դիակը ևս հայտնաբերվել է նույն համայնքում: Հադրութի շրջանում բնակվող 68-ամյա կնոջ դին հայտնաբերվել է ոտքերը պարանով փաթաթված, իսկ գանգը՝ մարմնից առանձնացված վիճակում: Շուշիի շրջանի Քարինտակ գյուղում բնակվող և հոգեկան առողջության խնդիր ունեցող 51-ամյա կնոջ դիակի արտաքին զննությամբ արձանագրվել են խոշտանգման մասին վկայող բացահայտ հետքեր, կտրված է ձախ ականջը և լեզուն: Այլ դիակները ևս եղել են անճանաչելի և նույնականացվել են ԴՆԹ հետազոտության արդյունքում:

Խոշտագումներից զերծ մնալու իրավունքն անկյունաքարային է դառնում պատերազմի գերիների մասին խոսելիս: Թե՛ 44-օրյա պատերազմի ընթացքում, թե՛ դրանից հետո համացանցում հայտնվեցին բազմաթիվ տեսանյութեր, որոնցում պատկերված էին Ադրբեջանի վերահսկողության տակ հայտնված հայ գերիները և նրանց նկատմամբ անմարդկային վերաբերմունքի դրվագներ: Գերիների ընդհանուր թիվը հայտնի չէ, սակայն Մարդու իրավունքների եվրոպական դատարանում արդեն իսկ շուրջ 200 դիմում կա հայ ռազմագերիների մասով, որոնց մի մասով ՄԻԵԴ-ը պարզաբանում է պահանջել Ադրբեջանից: Գերիների նկատմամբ անմարդկային վերաբերմունքի մասին վկայում են նաև մարդու իրավունքներով զբաղվող միջազգային կազմակերպությունների զեկույցները[8]:

Գերիների թվում կան նաև կանայք: Կանանցից մեկը գերեվարվել էր դեռևս պատերազմի ժամանակ, և նրա մասնակցությամբ տեսանյութը հայտնվել էր համացանցում, որում նա իբրև թե ուրախությամբ դիմավորում էր ադրբեջանցի զինվորներին[9]: Գերեվարման մեջ էր հայտնվել նաև մի տարեց հայ կին, որը գերությունից վերադառնալուց հետո ցուցմունք տվեց իր և այլ ռազմագերու նկատմամբ անմարդկային ու դաժան վերաբերմունքի և խոշտանգումների մասին[10]:

Զինադադարի մասին հայտարարությունից հետո՝ նոյեմբերի 10-ին, գերեվարվել էր լիաբանանահայ կին Մարալ Նաճարեանը, որը պատերազմից 1 ամիս առաջ Լիբանանից տեղափոխվել էր Արցախ: Վերջինս գերության մեջ էր անցկացրել 4 ամիս և միայն Մարդու իրավունք-

8. Տես՝ https://www.hrw.org/news/2021/03/19/azerbaijan-armenian-pows-abused-custody
9. Տես՝ https://www.facebook.com/1600924961/videos/10221720352830336/
10. Տես՝ https://bit.ly/3n5VJLC

ների եվրոպական դատարանի միջանկյալ որոշման, Լիբանանի և Ռուսաստանի իշխանություններ-ի միջամտությունից հետո վերադարձվել էր Լիբանան[11]:

ՊԱՏԵՐԱԶՄԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՆԱՆՑ ԵՎ ԱՂՋԻԿՆԵՐԻ ՍԵՌԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՎՐԱ

Խոսելով պատերազմական և հետպատերազմական իրավիճակներում կանանց ու աղջիկների սեռական և վերարտադրողական առողջության իրավունքի պաշտպանության մասին՝ հարկ է առանձնացնել երկու կարևոր հարթություն: Առաջինը վերաբերում է հակամարտող կողմերի կողմից միջազգային մարդասիրական նորմերի պահպանմանը և միջազգային հանրության կողմից դրանց մշտադիտարկմանը: Այս կոնտեքստում, խոսքը վերաբերում է մասնավորապես՝ բժշկական հաստատությունների չթիրախավորման, այդ թվում՝ ծննդատների, խաղաղ բնակչության շրջանում վիրավորների տարհանման և չթիրախավորման և այլ կարևոր հարցերին, որոնք կարգավորվում է միջազգային մարդասիրական օրենքով[12]:

Խնդրի մյուս հարթությունը վերաբերում է տեղահանվածների և պատերազմական գոտում բնակվողների առողջության և մասնավորապես՝ կանանց ու աղջիկների սեռական և վերարտադրողական առողջության իրավունքի իրացման երաշխիքների ստեղծմանը պետության, այդ թվում՝ ընդունող պետության կողմից:

Բժշկական հաստատությունների վրա հարձակումները տարածված պրակտիկա են պատերազմական գործողությունների ժամանակ: Այսպես, Կոսովոյի հիմնական հիվանդանոցը 1992թ., ռմբակոծվել է ավելի քան 100 անգամ: Human Rights Watch միջազգային կազմակերպությունը, անդրադառնալով Շրի Լանկայում քաղաքացիական պատերազմի ժամանակ բժշկական հաստատությունների ռմբակոծությանը, այն դիտարկում է որպես պատերազմական հանցագործություն[13]:

11. Տես՝ https://www.azatutyun.am/a/31145517.html
12. Տես՝ https://bit.ly/3n7WK5G
13. Տես՝ https://www.hrw.org/news/2009/05/08/sri-lanka-repeated-shelling-hospitals-evidence-war-crimes

2012-2014թթ. ԿԽՄԿ-ն 11 կոնֆլիկտային շրջաններում արձանագրել է բժշկական հաստատությունների թիրախավորման 2398 միջադեպ[14]:

Բժշկական հաստատությունների չթիրախավորումը պատերազմների ժամանակ հանդիսանում է միջազգային մարդասիրական օրենքով անթույլատրելի, որը կարգավորվում է ժնևյան չորրորդ կոնվենցիայով 1949թ.-ից ի վեր, և որը վավերացրել է 196 պետություն, այդ թվում՝ Ադրբեջանը[15]: Մինչդեռ 44-օրյա պատերազմի ընթացքում Ադրբեջանը թիրախավորել է բժշկական հաստատությունները և նաև խաղաղ բնակչությանը: Միջազգային մարդասիրական իրավունքի տեսանկյունից այս դեպքերը ոչ միայն հանդիսանում են անթույլատրելի, այլ պետք է խստագույն գնահատականի արժանանան միջազգային հանրության կողմից, որը սակայն պատերազմից ամիսներ անց չի տվել այս ամենին ոչ մի գնահատական:

Պատերազմական և հետպատերազմական իրավիճակներում պետությունները պետք է հավատարիմ լինեն մարդու իրավունքների ոլորտում ստանձնած իրենց պարտավորություններին, ինչպես իրենց իրավասության, այնպես էլ արտատարածքային իրենց վերահսկողության ներքո գտնվող անձանց նկատմամբ[16]:

Կանանց և աղջիկների սեռական և վերարտադրողական առողջության իրավունքի իրացման երաշխիքների ապահովումը պատերազմական և հետպատերազմական իրավիճակներում կարևոր նախապայման է բնակչության սոցիալական պաշտպանության շրջանակներում: Պատերազմական գործողությունների ընթացքում և դրանից հետո շատ կանայք և աղջիկներ ունենում են սեռական և վերարտադրողական առողջության իրավունքի իրացման մարտահրավերներ, այդ թվում՝ մանկաբարձական և գինեկոլոգիական աջակցություն հղիության և ծննդաբերության ընթացքում, հղիության արհեստական ընդհատման հասանելիություն, հակաբեղմնավորման և դաշտանային հիգիենայի ապահովման միջոցների հասանելիություն: Մինչդեռ իրականում, շատ կանայք և աղջիկներ, ամբողջ աշխարհում զրկված են լինում այդ ծառայությունների հասանելիությունից պատերազմի ընթացքում և դրանից հետո[17]:

44-օրյա պատերազմի հետևանքով Արցախից տեղահանված և պատերազմի ընթացքում Արցախում բնակվող կանայք և աղջիկները ևս բախվել են այս մարտահրա-

14. Տես՝ https://bit.ly/3tCoxh7
15. Տես՝ https://ihl-databases.icrc.org/ihl/INTRO/380
16. Տես՝ Committee on the Elimination of Discrimination Against Women, General Recommendation No. 30: Women in Conflict Prevention, Conflict and Post-Conflict Situations, para. 8, U.N. Doc. CEDAW/C/GC/30 (2013)
17. Տես՝ http://www.unfpa.org/sites/default/files/sowp/downloads/State_of_World_Population_2015_EN.pdf

վերներին:

ՄԱԿ-ի Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման Կոմիտեն կոչ է անում պատերազմական և հետպատերազմական ճգնաժամերի ընթացքում ձեռնարկել միջոցներ հասցեագրելու համակարգային անհավասարությունը, որը հանգեցնում է կանանց իրավունքների ոտնահարումներին, արձագանքել կանանց առանձնահատուկ կարիքներին և կանխարգելել դրանց առաջացումը[18]:

ՄԱԿ-ի Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման Կոմիտեի Գլխավոր հանձնարարական N30ը, որը պարտավորեցնում է պետություններին հարգել, պաշտպանել և իրացնել կանանց իրավունքները և ապահովել գենդերային հավասարություն կոնֆլիկտների ժամանակ, հստակ նշում է, որ ՄԱԿ-ի Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիան շարունակում է կիրառվել պատերազմների ընթացքում և դրանից հետո ևս: Այն նաև անդրադառնում է պետության պարտավորություններին (due diligence obligation)՝ պատասխանատվության ենթարկելու բոլոր այն ոչ պետական դերակատարներին, ովքեր կանանց դեմ հանցագործություն են կատարել[19]:

ՄԱԿ-ի Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման Կոմիտեի ընդհանուր հանձնարարական N30ը նաև նշում է, որ կարիք կա համաձայնեցված և միասնական մոտեցման, որը կնպաստի Անվտանգության խորհրդի կողմից «Կանայք, խաղաղություն և անվտանգություն» (այսուհետ՝ ԿԽԱ) օրակարգի շրջանակներում ՄԱԿ-ի Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիայի լայն կիրառմանը[20]:

ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի 1325 հռչակագրի կիրառման գլոբալ ուսումնասիրությունը ևս կարևորում է այս առաջարկը և կոչ անում մեծացնել փոխկապվածությունը ԿԽԱ օրակարգի և մարդու իրավունքների առկա մեխանիզմների միջև, ինչպես օրինակ՝ Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման կոնվենցիան և Մարդու իրավունքների խորհուրդը և դրա մեխանիզմները[21]:

Խոսելով պետության կողմից սոցիալական պաշտպանության երաշխիքների մասին՝ կարևոր է առանձնացնել սեռական և վերարտադրողական առողջության ծառայությունների հասանելիության ապահովումը պատերազմի ժամանակ և պատերազմից հետո,

18. Տես՝ CEDAW Committee, Gen. Recommendation No. 30, supra note 15, para. 79.
19. Տես՝ CEDAW Committee, Gen. Recommendation No. 30, supra note 15, para. 15.
20. Տես՝ CEDAW Committee, Gen. Recommendation No. 30, supra note 15, para. 26.
21. Տես՝ http://www.unwomen.org/~/media/files/un%20women/wps/highlights/unwglobal-study-1325-2015.pdf.

որը ոչ միայն հումանիտար աջակցության կարևոր երաշխիքներից է, այլ նաև մարդու իրավունքների իրացման կարևոր նախապայման[22]:

Մանկաբարձական ծառայությունների հասանելիությունը հղի կանանց համար, հակաբեղմնավորիչ միջոցների, անվտանգ հղիության արհեստական ընդհատման հասանելիությունը, դաշտանային հիգիենայի միջոցների ապահովումը և սեռական բռնության ենթարկված կանանց ու աղջիկների պաշտպանությունը թերևս առաջնային խնդիրներ են, որոնք պետք է հասցեագրվեն հումանիտար աջակցությունը մատուցելիս և արժանապատիվ պետության կողմից պաշտպանության հստակ մեխանիզմների ներդրմանը:

ՄԱԿ-ի տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտեն ճանաչել է, որ հակամարտություններից տուժած կանայք և աղջիկները անհամաչափորեն կարող են տուժել իրավունքների ոտնահարումներից և կոչ է արել պետություններին ձեռնարկել միջոցներ, երաշխավորելու ոչ խտրական և իրական հավասարություն (substantive equality), և նման միջոցները պետք է ճանաչվեն և կիրառվեն՝ մեղմելու փոխհատվող (ինտերսեկցիոնալ) խտրականության դրսևորումների ազդեցությունը սեռական և վերարտադրողական առողջության իրավունքի իրացման վրա[23]:

Կարևոր մարտահրավեր է նաև կանանց ու աղջիկների պաշտպանությունը և կանխարգելումը **սեռական բռնությունից**: ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի 1325 հռչակագրի կիրառման գլոբալ ուսումնասիրությունը վկայում է, որ մեծ թվով կանայք ու աղջիկներ, որոնք պատերազմների ընթացքում ենթարկվում են սեռական բռնության, չեն հաղորդում իրենց հետ տեղի ունեցած բռնությունը, որովհետև «... չկան հասանելի ծառայություններ կամ միջոցներ անվտանգ ձևով հաղորդում տալու համար, ստանալու աջակցություն և արժանապատիվ վերաբերմունք»[24]: Այս պարագայում կարևոր են նաև մասնագետների վերապատրաստումները, որոնք կարձագանքեն սեռական բռնության դեպքերին: Ի լրումն՝ ծառայությունների հասանելիությունից բացի, արդարադատության մատչելիությունը ևս կարևոր մարտահրավեր է սեռական բռնության դեպքերի բացահայտման տեսանկյունից: Հակամարտության գոտում խաղաղապահների առկայությունը մեկ այլ մարտահրավեր է սեռական բռնության տեսանկյունից[25], ինչի կապակցությամբ պետք է ստեղծել

22. Տես՝ https://reproductiverights.org/sites/default/files/documents/GLP_GA_SRHR_FS_0817_Final_Web.pdf
23. Տես՝ Committee on Economic, Social and Cultural Rights, General Comment No. 22 (2016) on the Right to sexual and reproductive health, para. 30, U.N. Doc. E/C.12/GC/22 (2016)
24. Տես՝ www.unwomen.org/~/media/files/un%20women/wps/highlights/unw-global-study-1325-2015.pdf.
25. Տես՝ https://www.refworld.org/pdfid/59c383034.pdf

մոնիթորինգային լրացուցիչ մեխանիզմներ, որպեսզի կանխարգելվեն խաղաղապահ կոնտինգենտի կողմից սեռական բռնության և ոտնձգությունների դեպքերը: Ընդունող երկիրը տեղահանվածներին տրամադրվող կացարաններում, ճամբարներում պարտավոր է ապահովել պատշաճ պայմաններ, այդ թվում՝ բավարար թվով սանհագույցներ և լոգախցիկներ, առանձին ննջարաններ[26], որոնք կկանխարգելեն սեռական բռնությունը: Հայաստանյան կացարաններում, որտեղ բնակվում են տեղահանված ընտանիքները, բացակայում են պատշաճ պայմաններ, որոնք կերաշխավորեն կանանց և աղջիկների պաշտպանությունը սեռական բռնությունից:

ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը ԿԽԱ օրակարգի վերաբերյալ ընդունել է մի քանի հռչակագրեր, որոնք միասին ամբողջացնում են այն մարտահրավերների արձագանքը, որոնց հետ բախվում են կանայք պատերազմական և հետպատերազմական իրավիճակներում[27]:

ԿԽԱ-ի օրակարգը կարևորում է նաև սեռական բռնության կանխարգելումը և ճանաչում է բռնաբարությունը, որպես պատերազմական զենք[28]:

Սեռական և վերարտադրողական առողջության իրավունքի իրացումը ենթադրում է մի շարք ծառայությունների հասանելիություն, ինչպես օրինակ՝ **մաքուր ջրի և հիգիենայի միջոցների առկայություն, հակաբեղմնավորիչ միջոցների հասանելիություն, ծննդօգնության պատշաճ կազմակերպում:** Առողջապահական համակարգի և ավելի լայն ենթակառուցվածքների գործունեության սահմանափակումը պատերազմի ժամանակ խոչընդոտում է սեռական և վերարտադրողական առողջության և իրավունքների լիարժեք իրացմանը հակամարտություններից տուժած կանանց և աղջիկների համար[29]:

Այսպիսով, միջազգային իրավական նորմերը հստակ ամրագրում են կանանց ու աղջիկների սեռական և վերարտադրողական առողջության իրավունքի իրացման երաշխիքների ապահովման անհրաժեշտությունը հակամարտող կողմերի կողմից և կարևորում դրանց պաշտպանությունը ինչպես պատերազմական գործողությունների ժամանակ, այնպես էլ դրանից

26. Տես՝ https://www.unicef.org/rosa/stories/when-going-bathroom-takes-courage
27. Տես՝ S.C. Res. 1325, U.N. Doc. S/RES/1325 (2000); S.C. Res. 1820, U.N. Doc. S/RES/1820 (2008); S.C. Res. 1888, U.N. Doc. S/RES/1888 (2009); S.C. Res. 1889,
U.N. Doc. S/RES/1889 (2009); S.C. Res. 1960, U.N. Doc. S/RES/1960 (2010); S.C. Res. 2106, U.N. Doc. S/RES/2106 (2013); S.C. Res. 2122, U.N. Doc. S/RES/2122
(2013); S.C. Res. 2242, U.N. Doc. S/RES/2242 (2015).
28. Տես՝ http://www.ohchr.org/en/newsevents/pages/rapeweaponwar.aspx.
29. Տես՝ https://www.guttmacher.org/gpr/2017/02/state-crisis-meeting-sexual-and-reproductive-health-needs-women-humanitarian-situations

հետո:

Ադրբեջանի հարձակման առաջին օրից՝ 2020թ. սեպտեմբերի 27-ից մինչև հրադադարի հաստատումը՝ 2020թ. նոյեմբերի 10-ը, ադրբեջանական զինված ուժերը թիրախավորել են քաղաքացիական անձանց և ենթակառուցվածքներն ինչպես Լեռնային Ղարաբաղում, այնպես էլ Հայաստանում:

Պատերազմի հենց առաջին օրը՝ սեպտեմբերի 27-ին, Ադրբեջանի կրակից վիրավորված հղի կինը հաջորդ օրը հրատապ ծննդաբերել է[30]:

Կանանց վերարտադրողական իրավունքի մեկ այլ ոտնահարում է հոկտեմբերի 7-ին Ստեփանակերտի ապաստարանում կնոջ ծննդաբերությունը, որը տեղի է ունեցել ադրբեջանական ինտենսիվ հրթիռակոծության ներքո[31]: Հրթիռակոծության ժամանակ կնոջն ուղղակի չեն կարողացել տեղափոխել ծննդատուն, որտեղ կինը և նորածինը կստանային պատշաճ մասնագիտական աջակցություն:

44-օրյա պատերազմի ընթացքում Ադրբեջանի կողմից թիրախավորվել են ոչ միայն խաղաղ բնակչությունը, այլ նաև քաղաքացիական ենթակառուցվածքները: Այսպես, հոկտեմբերի 28-ին, Ադրբեջանի զինված ուժերն օրվա ընթացքում բազմաթիվ անգամ ռմբահարել և հրթիռակոծել են Արցախի Հանրապետության մայրաքաղաք Ստեփանակերտը և մեծությամբ երկրորդ քաղաք Շուշին: Հարվածներ են հասցվել քաղաքի բնակելի թաղամասերին և քաղաքացիական ենթակառուցվածքներին, այդ թվում՝ Ստեփանակերտի ծննդատանը: Խաղաղ բնակչության շրջանում եղել են զոհեր և վիրավորներ[32]:

Այս պատերազմական հանցագործությունները, որոնք միջազգային մարդասիրական իրավունքի և սովորութային իրավունքի կոպիտ խախտում են, հստակորեն ցույց են տալիս, որ Արցախում Ադրբեջանի թիրախը ժողովուրդն է՝ նորածիններ, մայրեր, տարեցներ: Եվ այս տեսանկյունից **միջազգային հանրությունը պետք է խիստ գնահատական տա Ադրբեջանի** կողմից իրականացված հանցագործություններին:

Խոսելով Արցախից տեղահանվածներ ընդունող պետության արձագանքի մասին՝ հարկ է նշել, որ սեպտեմբերի 30-ին ՀՀ առողջապահության նախարարի հանձնարարությամբ Արցախից ժամանակավորապես Հայաստան տեղափոխված անձինք ամբուլատոր բժշկական օգնության և ծննդօգնության անհրաժեշտության դեպքում պետք է դիմեին «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոնի պոլիկլինիկա և ծննդա-

30. Տես՝ https://bit.ly/3sxByYd
31. Տես՝ https://lurer.com/?p=388496&l=am
32. Տես՝ https://bit.ly/3izSR7i

տուն, որտեղ անվճար կսպասարկվեին և կօգտվեին ծառայություններից:

Հոկտեմբերի 2-ին Առողջապահության նախարարության առաջարկով՝ «Պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման մասին» կառավարության N 318-Ն որոշմամբ նոր կարգ է սահմանվել, ըստ որի՝ Հայաստանում կամ Արցախում հայտարարված արտակարգ իրավիճակներում կամ ռազմական կամ ահաբեկչական գործողությունների հետևանքով տուժած անձանց հիվանդանոցային և ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական օգնությունն ու սպասարկումն իրականացվում են պետության կողմից երաշխավորված անվճար պայմաններով: Վերջիններս օգտվում են անվճար հիվանդանոցային բուժօգնությունից, այդ թվում՝ նորագույն և թանկարժեք տեխնոլոգիաներով մատուցվող բժշկական օգնության և սպասարկման ծառայություններից: Տուժած անձինք նաև անվճար պայմաններով կարող էին առողջության առաջնային պահպանման ծառայություններ ստանալ իրենց կողմից կամավոր ընտրված ամբուլատոր-պոլիկլինիկական կազմակերպությունում: Ի դեպ, տուժած անձին տրամադրվող պետության կողմից երաշխավորված անվճար պայմաններով ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական օգնությունը և սպասարկումը ներառում են նաև լաբորատոր ախտորոշիչ գործիքային հետազոտությունները և դեղերի տրամադրումը: Տուժածի՝ անձը հաստատող փաստաթղթերի բացակայության դեպքում հիմք է ընդունվում Հայաստանի Հանրապետության ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության տրամադրած ժամանակավոր փաստաթուղթը:

Մինչ օրս սեռական և վերարտադրողական առողջության իրավունքի իրացման տեսանկյունից պետությունը առաջնահերթություն է սահմանել հղիության և ծննդօգնության երաշխիքների ապահովումը, մնացած հարցերը չեն ստացել որևէ հատուկ կարգավորում պատերազմի ժամանակ և պատերազմից հետո և թողնված են կնոջ անձնական ռեսուրսների վրա: 2021թ. Մարտի 11-ի կառավարության նիստում որոշվեց, որ Արցախյան պատերազմում զավակ կորցրած զույգերը ցանկության դեպքում կարող են անվճար օգտվել վերարտադրողական բուժծառայության ծրագրից[33]:

Հումանիտար աջակցության տեսանկյունից, ինչպես միջազգային կառույցները, այնպես էլ տեղական հասարակական կազմակերպությունները աջակցություն տրամադրում են հիմնականում Արցախից տեղահանված կամ Արցախում բնակվող հղիներին և նոր ծննդա-

33. Տես՝ https://bit.ly/32zgqGo

բերած կանանց, ինչպես նաև տրամադրում են կանանց արժանապատվության առարկաներ, ինչպես օրինակ՝ միջադիրներ, ներքնաշոր: Հումանիտար աջակցության մատուցման շրջանակներում սեռական և վերարտադրողական առողջության պարագաների չափորոշիչներ մշակված չեն ո՛չ պետության, ո՛չ հասարակական կառույցների կողմից:

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԵՎ ԴՐԱՆԻՑ ՀԵՏՈ

Կրթության իրավունքն ամրագրված է Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 26-րդ հոդվածով[34], ՄԱԿ-ի Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների միջազգային դաշնագրի[35] 13-րդ հոդվածով, ինչպես նաև մարդու իրավունքների միջազգային այլ փաստաթղթերում: ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի[36] 28-րդ և 29-րդ հոդվածները նույնպես ճանաչում են հավասար հնարավորությունների հիման վրա կրթության իրավունքի իրականացումը:

Կրթության իրավունքը հանդիսանում է կարևոր նախապայման մարդու հիմնարար իրավունքների և ազատությունների իրականացման համար:

Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրի 13-րդ հոդվածով սահմանված է՝ կրթությունը պետք է ուղղված լինի մարդկային անհատի և նրա արժանապատվության գիտակցման լիակատար զարգացմանը և պետք է ամրապնդի հարգանքը մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների նկատմամբ: Կրթությունը բոլորին պետք է հնարավորություն ընձեռի արդյունավետ մասնակցություն ունենալ ազատ հասարակությանը՝ նպաստելու բոլոր ազգերի և ռասայական, էթնիկական կամ կրոնական բոլոր խմբերի միջև փոխըմբռնմանը, հանդուրժողականությանն ու բարեկամությանը և աջակցելու խաղաղության պահպանմանը:

34. Տես՝ https://www.arlis.am/documentview.aspx?docID=1896
35. Տես՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=18501
36. Տես՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=60503

Երբ հակամարտությունները հանգեցնում են ռեսուրսների սահմանափակման, պետությունը պարտավոր է ապահովել կրթական հաստատությունների մատչելիությունը, որակը հատկապես խոցելի խմբերի համար:

Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի 28-րդ հոդվածի համաձայն՝

1. Մասնակից պետությունները ճանաչում են երեխայի կրթության իրավունքը, և հավասար հնարավորությունների հիման վրա այդ իրավունքի իրականացմանն աստիճանաբար հասնելու համար նրանք, մասնավորապես.

(ա) մտցնում են պարտադիր և անվճար տարրական կրթություն,

(բ) խրախուսում են միջնակարգ կրթության տարբեր ձևերի, ներառյալ ընդհանուր և մասնագիտական կրթության զարգացումը, ապահովում են դրանց մատչելիությունը բոլոր երեխաների համար և ձեռնարկում են այնպիսի անհրաժեշտ միջոցներ, ինչպիսիք են անվճար կրթություն տրամադրելը և կարիքի դեպքում ֆինանսական օգնություն ցույց տալը,

(գ) բոլոր համապատասխան միջոցներով ապահովում են բարձրագույն կրթության մատչելիությունը՝ ըստ յուրաքանչյուրի ընդունակությունների,

2. Մասնակից պետությունները խթանում և խրախուսում են միջազգային համագործակցությունը կրթությանը վերաբերող հարցերով, մասնավորապես, ամբողջ աշխարհում տգիտության և անգրագիտության վերացմանը և գիտատեխնիկական գիտելիքների և ուսուցման ժամանակակից մեթոդների մատչելիության հեշտացմանը նպաստելու նպատակով: Այդ կապակցությամբ հատուկ ուշադրություն է դարձվում զարգացող երկրների կարիքներին:

ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդն արձանագրել է, որ կ**անայք ու աղջիկներն ի համեմատություն տղամարդկանց ու տղաների՝ անհամաչափ են տուժում պատերազմական և հետպատերազմական իրավիճակներից**[37]: Համաձայն ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակի տվյալների՝ **աղջիկները բախվում են լրացուցիչ խոչընդոտների իրենց կրթական իրավունքն իրացնելիս ավելի**, քան տղաները, ինչը պայմանավորված է գենդերային առանձնահատկություններով[38]:

Պատերազմական և հետպատերազմական իրավիճակներում աղջիկները զրկվում են կրթության

37. Տես՝ https://www.un.org/press/en/2003/sc7908.doc.htm
38. Տես՝ https://www.globalpartnership.org/blog/role-education-women-and-girls-conflict-and-post-conflict-countries

իրավունքից՝ **իրենց ընտանիքի կրտսեր երեխաների խնամքը ստանձնելու, վաղ ամուսնությունների, սեռական բռնության ենթարկվելու ռիսկի առկայության և ընտանիքը եկամտով ապահովելու անհրաժեշտությունից ելնելով**[39]: Սրանք կարևոր գործոններ են, որոնք պետք է հաշվի առնվեն ընդունող երկրի կողմից և հասցեագրվեն, որպեսզի բացառվի աղջիկների՝ կրթությունից դուրս մնալու վտանգը:

44 օր մղվող պատերազմում Ադրբեջանի ագրեսիայի հետևանքով թիրախավորվելեն նաև Արցախի կրթական հաստատությունները, որով և խախտվել է շուրջ **33.000 մարդու կրթության իրավունքը:**

Ադրբեջանի զինված ուժերը հրթիռահրետանային հարվածներ են հասցրել խիտ բնակեցված հատվածներին՝ ներառյալ դպրոցներին և նախադպրոցական կրթական հաստատություններին, այդ իսկ պատճառով բոլոր կրթական հաստատությունները փակ են եղել անորոշ ժամանակով, ուստի, ուսանողները և դպրոցականները զրկված են եղել կրթությունից, իսկ աշխատակազմը՝ աշխատանքից:

Ադրբեջանի զինված ուժերը գործել են խաղաղ բնակչության դեմ և հետապնդել են խաղաղ բնակչության առողջությանը վնասելու նպատակ, որոնց մեջ մտնում են նաև երեխաները:

Արցախի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի կողմից ներկայացրած՝ Արցախի Հանրապետության դեմ Ադրբեջանի հարձակումներից տուժած երեխաների իրավունքների մասին հատուկ զեկույցի համաձայն՝ 71 դպրոց և 14 նախադպրոցական հաստատություն, այդ թվում Ստեփանակերտի թիվ 4 և թիվ 10 դպրոցները, Հադրութի, Շուշիի, Այգեստանի, Մատաղիսի դպրոցները կրել են նյութական վնասներ Ադրբեջանի հրետակոծություններից, հրթիռային և օդային հարվածներից:

Ադրբեջանի հարվածների հետևանքով փակվել են բոլոր 220 դպրոցներն ու 58 մակապարտեզները: Հետևաբար, Արցախի թվով 23978 երեխաներ զրկվել են կրթության իրավունքից, դպրոց հաճախելու հնարավորությունից, իսկ 4036 երեխաներ՝ նախադպրոցական կրթություն ստանալու հնարավորությունից:

Հարկ է նշել, որ թիրախավորված են եղել ոչ միայն Արցախի Հանրապետության տարածքում գտնվող կրթական հաստատություններն, այլև Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Սոթք և Կութ համայնքներում գտնվող միջնակարգ դպրոցները:

39. Տես՝ https://www.globalpartnership.org/blog/role-education-women-and-girls-conflict-and-post-conflict-countries

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար Արայիկ Հարությունյանի 2020թ. սեպտեմբերի 27-ի հայտարարության համաձայն՝ ռազմական դրությամբ պայմանավորված, սահմանամերձ բնակավայրերի ուսումնական հաստատությունները անցում են կատարել հեռավար ուսուցման[40]:

Պատերազմական իրավիճակով պայմանավորված՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետ՝ ԿԳՄՍՆ), Հանրապետական և Տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների հետ համատեղ, հոգեբանական աջակցության ծառայություններ է կազմակերպել այն երեխաների համար, որոնք ունեն դրա կարիքը, այսպիսով գործարկել է անվճար թեժ գիծ՝ խոցելի խմբերում գտնվող երեխաների և նրանց ընտանիքների արագ արձագանքելու, ուղղորդելու կամ հոգեբանական ծառայություն տրամադրելու նպատակով:

ՅՈՒՆԵՍԿՕ-ի կրթության միջազգային բյուրոյի խորհրդի նիստի ընթացքում խորհուրդը նախագահող ՀՀ ԿԳՄՍ-ն հանդես է եկել հայտարարությամբ՝ նշելով 2020 թվականի սեպտեմբերի 27-ից Արցախի և Ադրբեջանի միջև շփման գծի ամբողջ երկայնքով Ադրբեջանի զինված ուժերի ագրեսիվ գործողությունների մասին, որոնք թիրախավորել են նաև խաղաղ բնակավայրերը: **ՅՈՒՆԵՍԿՕ-ն կոչ է արել Ադրբեջանին զերծ մնալ երեխաների, ուսուցիչների, կրթական անձնակազմի կամ դպրոցների վրա ցանկացած հարձակումից կամ վնաս հասցնելուց՝ ապահովել կրթության իրավունքը** «Անվտանգ դպրոցների հռչակագրի» սկզբունքների հիման վրա և դրա ուղեցույցներին համահունչ: Նշված փաստաթղթերը սահմանափակում են դպրոցների և համալսարանների օգտագործումը ռազմական նպատակներով և հորդորում ուժեղացնել կրթության պաշտպանությունը հարձակումներից, ինչպես նաև ապահովել անվտանգ կրթության շարունակականությունը զինված ընդհարումների ընթացքում[41]:

ՀՀ կառավարության կողմից ընդունված որոշման համաձայն՝ ՀՀ-ը 100 տոկոս փոխհատուցում տրամադրեց պատերազմի մասնակից ուսանողներին և մարտական գործողությունների մասնակիցների ուսանող զավակներին, կնոջը կամ ամուսնուն: Համաձայն ՀՀ կառավարության դեկտեմբերի 10-ի նիստում հաստատված որոշման՝ ամբողջությամբ փոխհատուցվեց 2020 թ. առաջին կիսամյակի ուսման վարձավճարը: Ուսման վարձի փոխհատուցման որոշմամբ շահառու կարող են հանդիսանալ առկա և հեռակա ուսուցմամբ վճարովի համակարգում միջին մասնագիտա-

40. Տես՝ https://escs.am/am/news/7227
41. Տես՝ https://escs.am/am/news/7253

կան ուսումնական հաստատությունների, բուհերի բակալավրիատի, մագիստրատուրայի, ասպիրանտուրայի և կլինիկական օրդինատուրայի սովորողները: Այն ուսանողները, որոնք արդեն վճարել են ուսման վարձը, համապատասխան չափով վճարած գումարը կփոխանցվի հաջորդ կիսամյակ, իսկ ավարտական կուրսի ուսանողների վճարած գումարը կվերադարձվի:

Վերը նշված որոշումն ընդունելուց հետո տարբեր համալսարաններ հայտարարություններ արեցին՝ կապված ուսման առաջին կիսամյակի վարձավճարները փոխհատուցելու մասին, ինչպես նաև դիմելու ընթացակարգի մասին:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը նաև հայտարարեց, որ Արցախից Հայաստան տեղափոխված երեխաների համար պատերազմի առաջին օրերին ապահովվել է կրթական գործընթացի շարունակականությունը, քանի որ կարճ ժամանակահատվածում իրականացվել է դպրոցականների հաշվառում և կրթական կարիքների գնահատում:

Հարկ է նշել, որ երեխաները հնարավորություն են ունեցել հաշվառվելու և հաճախելու իրենց ժամանակավոր բնակության վայրին մոտ դպրոցներ, գործընթացը արագ է անցկացվել, քանի որ դպրոցների վարչակազմերից փաստաթղթեր չեն պահանջել, դեռ ավելին՝ նախարարությունը հաշվի չի առել դպրոցների ծանրաբեռնվածությունը:

Դպրոցներին կցված բոլոր երեխաները ստացել են անհրաժեշտ դասագրքերը, անհրաժեշտության դեպքում՝ նաև գրենական պիտույքներ: Ընդհանուր առմամբ, հայաստանյան դպրոցներում պատերազմի ողջ ընթացքում կրթություն է ստացել արցախցի երեխաների կեսից ավելին:

Միևնույն ժամանակ, հենց նախարարությունից նշել էին, որ 2000-ից ավել երեխաներ տեխնիկական միջոցներ չունենալու պատճառով հեռավար անցկացվող դասերին չեն մասնակցել, նշյալ խնդիրը փորձել են լուծել առանձին հասարակական կազմակերպություններ:

Այսպիսով, ՀՀ կառավարությունը վերոնշյալ ծրագրերի միջոցով փորձել է ապահովել տեղահանված անձանց շարունակական կրթության ապահովման հնարավորությունը, սակայն բոլոր ծրագրերում բացակայում է գենդերային բաղադրիչը, ծրագրերը հաշվի չեն առնում տղաների և աղջիկների կարգավիճակային տարբերությունները և այն ռիսկերը, որոնք հանգեցնում են աղջիկների՝ կրթությունից դուրս մնալու գործընթացին:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ ԵՎ ՏԱՐԱԾՔՈՒՄ

Միջազգային հումանիտար իրավունքը մի շարք դրույթներ է պարունակում, որոնք ներառում են պետության պարտավորությունը՝ ապահովելու սնունդ և բժշկական պարագաներ բնակչության համար (1949թ. օգոստոսի 12-ի Քաղաքացիական բնակչության պաշտպանության մասին Ժնևի կոնվենցիայի 55-րդ հոդված), համաձայնելու բնակչության տարհանման սխեմաներին, եթե նրանք բավարար միջոցներով ապահովված չեն (նույն կոնվենցիայի հոդված 59), ապահովել հումանիտար բեռների օպերատիվ բաժանումը (նույն կոնվենցիայի հոդված 61) կամ ապահովել, որ բնակչությունը ստանա անհատական հումանիտար աջակցություն, որոնք ուղարկվում են վերջիններիս (նույն կոնվենցիայի հոդված 62):

Ինչպես անդրադարձել ենք վերևում, պատերազմական գործողությունների ժամանակ Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին ՄԱԿ-ի դաշնագրով ապահովված իրավունքները չեն կասեցվում, և տարածքը գրաված պետությունը պարտավոր է ապահովել Դաշնագրով ամրագրված նվազագույն իրավունքները նույնիսկ պատերազմի ժամանակ, այդ թվում՝ նաև Դաշնագրի 9-րդ հոդվածով ամրագրված սոցիալական ապահովության իրավունքը:

Սոցիալական ապահովության իրավունքի պաշտպանության տեսանկյունից կիրառելի են միջազգային մարդասիրական իրավունքի մի շարք կանոններ: Մասնավորապես, **սովը, որպես պատերազմի միջոց կիրառելը,** ինչպես նաև քաղաքացիական բնակչության գոյատևման համար խիստ անհրաժեշտ օբյեկտների, ներառյալ սննդամթերքի պահեստների, տնային կենդանիների և խմելու ջրի աղբյուրների ոչնչացումը, արգելված է: Այլ կերպ ասած՝ բնակչության սոցիալական ապահովությունը վերաբերում է ոչ միայն համապատասխան ծառայությունների տրամադրմանը, այլ նաև պատերազմի վարման կանոններին: Այս համատեքստում կենտրոնական հարց է դառնում տարբերակումը ռազմական և քաղաքացիական օբյեկտների միջև:

Ադրբեջանի սանձազերծած և 44-օր տևած պատերազմի ժամանակ **Արցախի** մոտ **90.000 բնակիչներ տեղահանվել են (զգալի**

մասը կանայք), կորցրել են իրենց տունը և գույքը: Վնասվել են մի շարք ենթակառուցվածքներ: Ադրբեջանը պատերազմի ընթացքում հրետակոծություններն իրականացրել է առանց քաղաքացիական և ռազմական օբյեկտների միջև տարբերակման: Հրետակոծվել են ինչպես բնակելի շենքեր և հիվանդանոցներ, այնպես էլ բնակչության գոյատևման համար անհրաժեշտ ենթակառուցվածքներ, մասնավորապես Վարդենիս-Սոթք ավտոճանապարհը[42], Ստեփանակերտի կենտրոնական շուկան[43], խանութներ և պահեստներ[44], Ստեփանակերտի էլեկտրակայանը[45]և այլն:

Վերոնշյալ չտարբերակված և քաղաքացիական օբյեկտների թիրախավորման հետևանքով Ստեփանակերտի բնակչությունը մնացել է հոսանքազրկված, սննդի սահմանափակ պաշարներով, իսկ բնակչության զգալի մասը ստիպված է եղել լքել իրենց տները:

ՏԵՂԱՀԱՆՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ

ՄԱԿ-ի տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտեն սոցիալական ապահովության իրավունքի մասին 19-րդ ընդհանուր մեկնաբանությունում արձանագրել է, որ առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձնել այն հարցին, որ պետության սոցիալական ապահովության համակարգը պատրաստ լինի արձագանքել արտակարգ իրավիճակներին, այդ թվում՝ պատերազմին և հետպատերազմական իրավիճակներին: Պետությունը պարտավոր է օգտագործել իրեն հասանելի առկա բոլոր միջոցները սոցիալական ապահովության իրավունքի նվազագույն մակարդակ ապահովելու համար[46]:

Հետպատերազմական շրջանում ՀՀ և Արցախի Հանրապետության կողմից իրականացվեցին և շարունակում են **իրականացվել մի շարք սոցիալական աջակցության ծրագրեր՝** տեղահանված անձանց և ռազմական գործողություններ-

42. Տես՝ https://www.azatutyun.am/a/30868643.html
43. Տես՝ https://www.youtube.com/watch?v=UhV0GA3lX6k
44. Տես՝ https://bit.ly/3sDoIHZ
45. Տես՝ https://bit.ly/2QHv2kr
46. Տես՝ https://bit.ly/3sDb8nQ

ին մասնակցած զինծառայողների իրավունքների վերականգնման ուղղությամբ: Կազմակերպվեց ՀՀ տարածքում Արցախում հաշվառված անձանց կենսաթոշակների և նպաստների վճարումը: Արցախից տեղահանված անձանց համար ՀՀ կառավարության կողմից իրականացվեցին 5 սոցիալական աջակցության ծրագրեր, որոնք ենթադրում էին միանվագ ֆինանսական աջակցություն կամ կրած ծախսերի փոխհատուցում: Այսպես, Արցախի բնակիչներին տրամադրվեց նվազագույն աշխատավարձի չափով միանվագ օգնություն, Ադրբեջանի վերահսկողության տակ անցած համայնքների բնակիչներին՝ 300,000 ՀՀ դրամի չափով, իսկ Արցախի տարածքում անշարժ գույք կորցրած անձանց՝ 250.000 ՀՀ դրամի չափով միանվագ օգնություն: Արցախի կամ Ադրբեջանի վերահսկողության տակ անցած տարածքների բնակիչներին հյուրընկալած անձանց կատարած ծախսերի համար տրամադրվեց մասնակի փոխհատուցում մի քանի ամիսների համար[47]: Ռազմական գործողությունների հետևանքով վիրավորում ստացած անձանց ևս տրամադրվեց միանվագ ֆինանսական աջակցություն, ինչպես նաև զինծառայողների ապահովագրության համակարգի միջոցով սոցիալական և բժշկական ծառայությունների փոխհատուցում:

Թեև վերոնշյալ սոցիալական ծրագրերով պետությունը փորձեց ապահովել տեղահանված և պատերազմից տուժած անձանց սոցիալական ապահովության իրավունքի նվազագույն բաղադրիչները, սակայն սոցիալական աջակցության տրամադրման գործընթացն ինքնին բազմաթիվ տեխնիկական թերություններ ուներ: Անձի՝ Արցախի բնակիչ հանդիսանալու ճշգրտումը տեղի էր ունենում էլեկտրոնային համակարգի միջոցով, և տվյալների բազաների անճշտությունների հետևանքով տեղահանված անձանց դիմումները երբեմն մերժվում էին: Համապատասխան գերատեսչությունը չուներ բավարար մարդկային ռեսուրսներ բոլոր դիմում-բողոքներին և զանգերին ժամանակին պատասխանելու համար: Պետական կառույցների կողմից համակարգմանն ուղղված քայլերն օպերատիվ չէին, իսկ ապաստարաններում տեղավորման և առաջին անհրաժեշտության իրերի տրամադրման գործընթացը պետական մարմինների կողմից ավելի դանդաղ և բյուրոկրատական էր, ուստի, տեղահանվածների մեծ մասը նախընտրում էր աջակցություն ստանալ անհատ անձանցից կամ հասարակական կազմակերպություններից:

Տեղահանված անձանց ապաստանի տրամադրումը, առաջին անհրաժեշտության պարագաներով ապահովումը իրականացվում էր նաև հասարակական կազմա-

47. Տես՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=149810

կերպությունների ջանքերով: **Այստեղ հատկանշական է կանանց իրավունքներով զբաղվող կազմակերպությունների դերն** ու մասնակցությունը, ռեսուրսների մոբիլիզացիան և պետության գործառույթների մի մասի ստանձնումը: ՀՀ տարածքում գործող՝ կանանց իրավունքներով զբաղվող կազմակերպությունների հիմնական մասը ներգրավվեց հումանիտար աջակցության ծրագրերին, որոնք շարունակվեցին նաև հետպատերազմական շրջանում[48]: Աջակցության ծրագրերի իրականացմանն ու մոբիլիզացիոն աշխատանքներում ներգրավված էին նաև պատերազմական տարածքներում աշխատող կանանց կազմակերպությունները, մասնավորապես՝ Կանանց կենտրոն Շուշին:

Այսպիսով, թեև պետության կողմից ջանքեր գործադրվեցին տեղահանված անձանց սոցիալական ապահովության իրավունքի ապահովման ուղղությամբ, սակայն արդյունքում պարզ դարձավ, որ պետական համակարգը պատրաստ չէր արձագանքելու հետպատերազմական իրավիճակում տեղահանված անձանց սոցիալական ապահովության նվազագույն կարիքներին և կարող էր կոլապսի ենթարկվել, եթե հասարակական և մասնավոր կազմակերպությունները չներդնեին իրենց ռեսուրսները՝ աջակցելու տեղահանված անձանց:

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ ԿԱՆԱՆՑ ՎՐԱ

Պատերազմը մեծ ազդեցություն է թողնում ոչ միայն զինվորների, այլ նաև հասարակության յուրաքանչյուր անհատի վրա՝ փոխում է ընտանիքում սոցիալ-դերային առանձնահատկությունները, մարդիկ ստիպված հեռանում և տեղահանվում են իրենց տնտեսություններից, գերեվարվում են, ունենում բազմաթիվ կորուստներ. այս բոլոր գործոնները բացասաբար են ազդում անհատի հոգեբանական, ֆիզիկական և սոցիալական ոլորտների և կյանքի որակի վրա: Ցավոք, հասարակության առավել խոցելի խմբերը դառնում են Է՛լ ավելի խոցելի. օրինակ՝ կանանց և երեխաների պարագայում մեծանում է բռնության և շահագործման ենթարկվելու հավանականությունը: Այսպիսով՝ կանայք պատերազմի ընթացքում կարող են ենթարկվել

48. Տես՝ https://bit.ly/32BjpxQ

ստիպողական տեղահանության, աղքատանալ, կարող են դիտվել թերսնում և առողջական խնդիրների վատթարացում, ընտանիքից բաժանում կամ տնտեսությունից զրկում, կարող են ենթարկվել սեռական բռնության, թրաֆիքինգի զոհ դառնալ:

Ըստ Առողջապահական համաշխարհային կազմակերպության՝ առողջ համարվում է ոչ միայն այս կամ այն խանգարման բացակայությունը, այլ նաև սոցիալական, ֆիզիկական և մտավոր բարեկեցությունը: Այսինքն՝ բռնի տեղահանությունը, տարրական պայմանների բացակայությունը, մտերիմների կորուստը, նախկին դերերի կորուստը և այլ գործոններ հստակ ցուցիչ են, որ ցավոք, կանայք դառնում են պատերազմական գործողությունների զոհ, ինչի մասին հաճախ չի ընդգծվում, քանի որ համարվում է, որ պատերազմի հիմնական զոհ դառնում են նրանք, ովքեր անմիջապես մասնակցել են պատերազմական գործողություններին: Այսպիսով, պատերազմը բացասական ազդեցություն է ունենում կանանց և աղջիկների հանրային առողջության , մասնավորապես՝ հոգեբանական, հուզական վիճակի վրա: Հետազոտությունները ցույց են տալիս, որ կանայք և տղամարդիկ տարբեր կերպ են վերապրում պատերազմի տրավման, և հետևաբար, գենդերային վերլուծությունը այս տեսանկյունից անհրաժեշտ գործիք է[49]:

Այսպես, վերցնելով ընտանիքի **տղամարդու կորստի հետևանքով առաջացած բեռը՝** կանայք ստիպված են լինում աշխատել ամենացածր աշխատավարձով, նրանք, ինչպես և երեխաները ունենում են հոգեբանական խնդիրներ: Պատերազմական գործողությունները, թաքստոցների ռմբակոծությունը, տարհանման ընթացքում առաջացող բարդությունները՝ երկար ժամանակ քայլել, ընկնել կրակահերթերի և ռմբակոծությունների տակ, բժշկական համապատասխան աջակցություն ստանալու անհնարինություն, սեռական ոտնձգություններ և բռնություն կամ նման տեսարանների ականատես լինել, կարող են առաջացնել հոգեբանական և սոցիալական բազմաթիվ խնդիրներ՝ դող, դեպրեսիա, տագնապ, մեկուսացում[50]:

Բազմաթիվ մշակույթներում, այդ թվում նաև հայ մշակույթում երեխաների դաստիարակության և զարգացման համար պատասխանատու են հիմնականում կանայք, , և թե՛ պատերազմի ընթացքում, և թե՛ դրանից հետո Է՛լ ավելի է մեծանում այդ պատասխանատվությունը, և կինն է դառնում համայնքի շարունակությունն ապահովողն ու պատասխանատուն, ինչն էլ իր

49. Տես՝ https://www.apa.org/monitor/2009/09/women-war
50. Տես՝ Yaser Snoubar, N. D. (January-April 2016). Impact of Wars and Conflicts on Women and Children in Middle East:Health, Psychological, Educational and Social Crisis. European Journal of Social Sciences Education and Research

հերթին աջակցող գործոն է երեխաների՝ պատերազմով պայմանավորված տրավմայի հաղթահարման տեսանկյունից, բայց միևնույն ժամանակ՝ ևս մեկ ռիսկային գործոն կնոջ համար: Եթե մի պետություն պատերազմում է մյուսի դեմ ու ցանկանում մշակույթը խարխլել, ապա կինը դառնում է ռազմավարական կարևոր նշանակետ՝ ընտանիքում, համայնքում մեծ դեր ունենալու առումով :Ստացվում է, որ մի կողմից՝ պատերազմի ընթացքում կանայք կրում են ծանր հետևանքներ, բայց պատերազմի ավարտից հետո վնասները չեն պակասում, և կանայք շարունակում են, երբեմն նաև ստիպված, դերեր վերցնել իրենց վրա, միևնույն ժամանակ ենթարկվելով խտրականության տարբեր ձևերի՝ օրինակ, Աֆղանստանում կատարված հետազոտությունները ցույց են տվել, որ պատերազմից հետո սնունդն առաջնահերթ տրվում էր տղաներին, իսկ աղջիկներին տրվում էին սննդի մնացորդները: Էլ Բուշրայի և Լոպեզի կողմից կատարված հետազոտությունը ցույց է տվել, թե համայնքային մակարդակում ինչքան քիչ են կարևորվել կնոջ սոցիալ-հոգեբանական խնդիրները պատերազմից հետո, և շատ հաճախ պետական տարբեր ինստիտուտներ նույնիսկ չեն կարևորել կանանց՝ պատերազմի հետևանքով առաջացած հիմնախնդիրները[51]: Ցավոք, թե՛ համայնքի կողմից, և թե՛ հենց կանանց կողմից պատերազմի հետևանքով առաջացած հոգեբանական խնդիրները կարող են չդիտարկվել որպես խնդիրներ, որոնք կարիք ունեն մասնագիտական միջամտության. ոմանք տևական ժամանակ չեն ստանում հոգեբանական աջակցություն, ոմանք էլ երբեք չեն դիմում հոգեբանի, ինչն էլ ավելի է բարդացնում հոգեբանական խնդիրները: Այսպես, պատերազմից հետո մշակութային սպասելիքները մեծացնում են կնոջ դերի նկատմամբ առկա կարծրատիպերը և պատկերացումները: Կնոջ նկատմամբ կարող է մեծանալ շրջապատի կողմից վերահսկողությունը, կանանց պահանջմունքները դառնում են երկրորդային և՛ իրենց ընկալմամբ, և՛ հասարակության կողմից: Օրինակ, հատկապես այրիանալուց հետո կնոջ նկատմամբ փոխվում են սպասելիքները, մեծանում է վերահսկողությունը հարազատների կողմից:

Մյուս հիմնախնդիրը, որին բախվում են կանայք թե՛ պատերազմի ընթացքում, թե՛ պատերազմից հետո, **սեռական բռնությունն է.** պատմականորեն բռնաբարությունը համարվել է պատերազմի ցավոտ, բայց և միևնույն ժամանակ, դժվար ապացուցելի ձևը նույնականացնելու խնդիրը և դիտարկվում է

, 211-215.

51. Տես՝ Yaser Snoubar, N. D. (January-April 2016). Impact of Wars and Conflicts on Women and Children in Middle East:Health, Psychological, Educational and Social Crisis. European Journal of Social Sciences Education and Research , 211-215.

որպես գործիք թշնամուն վախեցնելու համար: Մասսայական բռնաբարությունները մասնավորապես Հարավսլավիայի և Ռուանդայի օրինակով նույնականացվել են որպես պատերազմական հանցագործություն և մարդկության դեմ գործած հանցագործություն:[52] Ցավոք, երիտասարդ կանայք և աղջիկները դառնալով սեռական բռնության զոհ՝ ունենում են ոչ միայն տարբեր ֆիզիկական խնդիրներ, այլ նաև հոգեբանական խնդիրներ:

Հաջորդ խնդիրը, որն ուսումնասիրվել է՝ կապված է **ընտանեկան բռնության հետ:** Ցավոք, հետպատերազմյան գոտիներում մեծանում է ընտանեկան բռնության հավանականությունը, բազմաթիվ երկրների փորձը ցույց է տալիս, որ տղամարդու կողմից ընտանիքի մատակարարի դերի նվազման և պատերազմի հետևանքով առաջացած հոգեբանական հետևանքներն ազդում են ընտանեկան հարաբերությունների վրա՝ մեծացնելով բռնության հավանականությունը[53]: Ինչպես նաև նման հասարակություններում մեծանում է գենդերային բռնության յուրաքանչյուր դրսևորում, քանի որ հասարակության համար նոր նորմեր են առաջանում, մասնավորապես՝ բռնության նորմալիզացիան, ինչը, ցավոք, առաջնային ազդեցություն է ունենում կանանց և աղջիկների վրա:

Վերոգրյալ տրավմատիկ իրողությունները (հարկ է նշել, որ տրավմատիկ են համարվում այն իրադարձությունները, որոնք գերազանցում են օրգանիզմի հարմարվելու սովորական կարողությունները և ներառում են մարդու կյանքի և ֆիզիկական ամբողջականության նկատմամբ վտանգ: Հոգեբանական տրավմայի առաջացմանը հանգեցնող կամ հավանականորեն հանգեցնող առավել տարածված գործոններ են հանկարծակի հարձակումը, բռնաբարությունը, պատերազմը, տարերային աղետները, մանկության տարիներին սեռական բռնության ենթարկվելը և այլն) կարող են ունենալ կարճաժամկետ և երկարատև հետևանքներ, ինչպես նաև ունենալ ուղղակի հետևանքներ՝ վնասվածքներ, վիրավորումներ և անուղղակի՝ վարքագծի փոփոխություն, տագնապային խանգարումներ և այլն: Հետևանքների ուժգնությունը և ազդեցությունն անձնային մակարդակում, ինչպես ցույց են տալիս հետազոտությունները, կախված են տրավմատիկ գործոնի տևողությունից և առանձնահատկություններից:

Այսպիսով, մահը պատերազմի հետևանքներից սառցաբեկորի վերին և արտաքին շերտն է, պատերազմի հետևանքները ահռելի են, իսկ հոգեբանական հետևանքները՝ ցավոք, քիչ փաստաթղթավոր-

52. Տես՝ https://www.apa.org/monitor/2009/09/women-war
53. Տես՝ https://www.ncbi.nlm.nih.gov/pmc/articles/PMC1472268/

ված: Հոգեբանական խնդիրները կարող են լինել դիսթրեսը, դեպրեսիան, հոգեսոմատիկ դրսևորումները՝ ճնշման բարձրացում, սիրտանոթային համակարգի խնդիրներ, հետտրավմատիկ սթրեսային խանգարում՝ ՀՏՍԽ, ըստ DSM-5-ի՝ ունի մի շարք հիմնական ցուցիչներ՝ որևէ տեսակի տրավմատիկ փորձի առկայություն, կպչուն ախտանիշներ, խուսափում տրավմա հիշեցնող գործոններից և իրավիճակներից, բացասական փոփոխություններ կոգնիտիվ մակարդակում և տրամադրությունում, գերգրգռվածություն, որոնցից յուրաքանչյուրն ունի իր ախտանիշները, և մեկ ամսից ավել կրկնվելու դեպքում դրանք իրենց ազդեցությունն են ունենում անձի հարմարվողականության վրա:

Հատկանշանական է, որ 44-օրյա պատերազմը բազմաթիվ կանանց կյանքում երկրորդ պատերազմն է, ինչը նշանակում է, որ բազմաթիվ դեպքերում կարող ենք խոսել ռետրավմատիզացիայի մասին: Ռետրավմատիզացիան գիտակցված և չգիտակցված հիշեցումն է նախկին տրավմայի, ինչը հանգեցնում է նախկին իրավիճակով պայմանավորված տրավմայի վերապրմանը: Այդպիսի գործոններ կարող ենք դիտարկել տեղահանությունը, ռմբակոծությունները, ինչպես նաև մեկ այլ գործոն կարող ենք դիտարկել մինչ այդ համաճարակային իրավիճակով պայմանավորված սահմանափակումները, տագնապներն ու վախերը: Հարավսլավիայի պատերազմի ականատեսների հետ իրականացված հետազոտությունները ցույց տվեցին, որ համաճարակային իրավիճակով պայմանավորված սահմանափակումները վերաակտիվացրել են պատերազմով պայմանավորված նախկին տրավմաները[54]:

Այսպիսով, վերը նշվածից պարզ է դառնում, որ կանայք և տղամարդիկ տարբեր կերպ են վերապրում պատերազմի հոգեբանական հետևանքները, հոգեբանական տրավման և, հետևաբար, գենդերային վերլուծությունը այս տեսանկյունից անհրաժեշտ գործիք է. վերցնելով ընտանիքի տղամարդու կորստի հետևանքով առաջացած բեռը՝ կանայք ստիպված են լինում աշխատել ամենացածր աշխատավարձով, թաքստոցների ռմբակոծությունը, տարհանման ընթացքում առաջացող բարդությունները՝ երկար ժամանակ քայլել, ընկնել կրակահերթերի և ռմբակոծությունների տակ, բժշկական համապատասխան աջակցություն ստանալու անհնարինությունը, սեռական ոտնձգությունները և բռնությունը, կամ նման տեսարանների ականատես լինելը կարող են առաջացնել և առաջացնում են հոգեբանական և սոցիալական բազմաթիվ խնդիրներ՝ դող, դեպրեսիա, տագ-

54. Տես՝ https://www.ncbi.nlm.nih.gov/pmc/articles/PMC7480753/

նապ, մեկուսացում: Այս ամենին ավելանում է նաև հասարակության մեջ առկա խտրականությունը կանանց և աջիկների նկատմամբ, և հետպատերազմյան ժամանակաշրջանում ագրեսիայի և բռնության նորմալիզացիան և դրանից բխող կանանց կրկնակի զոհականացումը հասարակությունում, Է՛լ ավելի բացասական ազդեցություն են ունենում կնոջ հոգեբանական վիճակի վրա: Հոգեբանական հետևանքներն էլ կարող են լինել բազմազան և ունենալ ոչ միայն կարճաժամկետ, այլ նաև երկարաժամկետ ազդեցություն:

ԱՄՓՈՓՈՒՄ

2020թ. Արցախյան պատերազմի ազդեցությունը կանանց իրավունքների վրա պատշաճ ուշադրության չի արժանացել: Միջազգային հանրությունը չի տվել պատշաճ գնահատական Ադրբեջանի կողմից մարդու իրավունքների, այդ թվում՝ կանանց իրավունքների խախտումներին, իսկ ընդունող երկրի՝ Հայաստանի Հանրապետության քաղաքականությունը տեղահանվածներին աջակցություն ցուցաբերելու ուղղությամբ գենդերազգայուն չէ: Այսպես, կանանց և աղջիկների սոցիալական ապահովության, կրթության, սեռական և վերարտադրողական առողջության, բռնությունից զերծ լինելու իրավունքների առումով պետության արձագանքը հիմնված չի եղել գենդերային առանձնահատկությունների վրա, հաշվի չեն առնվել կանանց տարբեր խմբերի առանձնահատուկ կարիքները:

Ամփոփելով 2020թ. Արցախյան պատերազմի և հետպատերազմական շրջանի ազդեցությունը կանանց հիմնարար իրավունքների վրա ուսումնասիրությունը՝ կարևոր ենք համարում՝

- միջազգային հանրության արձագանքը Ադրբեջանի կողմից մարդու իրավունքների, այդ թվում՝կանանց իրավունքների խախտումներին,
- տեղահանված բնակչության կարիքներին արձագանքող քաղաքականությունների վերանայումը և գենդերազգայուն մոտեցման որդեգրումը ընդունող երկրի կողմից,
- սեռական բռնության դրսևորումների մշտադիտարկման իրականացումը

հետպատերազմական շրջանում, ինչպես Արցախի տարածքում, այնպես էլ տեղահանվածների կացարաններում,

- պատերազմի հետևանքով կերակրողին կորցրած անձանց տնտեսական աջակցության ծրագրերի ներդրումը,
- պատերազմից տուժած կանանց ու աղջիկների համար հոգեբանական աջակցության ծրագրերի ներդրումը: